**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1» ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի**

| | |
|---|---|
| ք. Երևան | 30 հունվարի, 2026թ.<br>Ժամը՝ 10:00 |
| Մասնակցում էին՝ | |
| Գնահատող հանձնաժողովի նախագահ /ԳԱՊ/ | Ա. Առուշանյան |
| Հանձնաժողովի անդամներ | |
| /ԳՊ/ԳԱ/՝ | Կ. Եսայան |
| /ԳՊ/ԳԱ/՝ | Ն. Դավթյան |
| /ԳՊ/ԲԱ/՝ | Ն. Պետրոսյան |
| /ԳՊ/ԲԱ/՝ | Թ. Ավետիսյան |
| Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ | Լ. Ադամյան |

1. «**ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1**» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2026թ.-ի հունվարի 30-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Արաբկիր, Ադոնցի փ., Շ4, բն. 8-րդ հարկ, 0014, հեռ. +37460508287 |
| 2 | «Բիոնկոդ» ՍՊԸ | Հակոբ Հակոբյան 3, հեռ. +37460755888, +37444755888 |

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5. Հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումը իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

**« ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1» ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

12 փետրվարի 2026թ.
Ժամը՝ 09:00

6. Հանձնաժողովն արձանագրեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կցվել և ներկայացվել են պատշաճ: Ներկայացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ.

ա) «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը, դիմում-հայտարարությունը և գնային առաջարկը, ինչպես նաև «Մասնագիտական փորձառություն»՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը և այլ փաստաթղթերը, ներկայացվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով ներկայացված փաստաթղթերում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգի Հրավերի առաջին մասի 2.4.2 կետով սահմանված պահանջների նկատմամբ.

- Որպես DevOps ճարտարագետ առաջադրված Կարեն Ղևոնդյանի աշխատանքային փորձը չի համապատասխանում Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 5-րդ տողով պահանջված որակավորմանը (3 տարվա

աշխատանքային փորձ Որպես Devops ճարտարագետ), ինչպես նաև բացակայում է որակավորումը հավաստող փաստաթղթի լուսապատճենը:

- Հրահատ Թահմազյանի և Կարեն Ղևոնդյանի աշխատանքային որակավորումը և փորձը հավաստող փաստաթղթերում լրացվել է անձնագրի տվյալները, սակայն ներկայացվել է նույնականացման քարտերի լուսապատճենները: Ուստի անհրաժեշտ է ներկայացնել անձնագրերի լուսապատճենները:

- Որպես ավագ ծրագրավորող ներկայացված Գրիգորի Արզումանյանի աշխատանքային որակավորումը և փորձը հավաստող փաստաթղթերում Հրավերի Հավելված 1.1-ում աշխատանքային փորձի ժամանակահատվածը սյունակում կա անհամապատասխանություն ՊԵԿ-ի կողմից տրված անհատական հաշվից տրված տեղեկանքի համեմատ («ԷՆԵՐՋԱՅՋ ԳԼՈԲԱԼ ՍԵՐՎԻՍԻՋ» -ում աշխատել է 01.04.2019-05.06.2020, «Թել Սել»-ում 20.07.2020-25.04.2023): Անհրաժեշտ է շտկել Հրավերի Հավելված 1.1-ը:

- Որպես որակի պատասխանատու-թեստավորող ներկայացված Նելլի Արշակյանի աշխատանքային որակավորումը և փորձը հավաստող փաստաթղթերում «Դանիամ» ՍՊԸ-ի տրված տեղեկանքում պաշտոնը նշված է միայն թեստավորող, իսկ Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 4-րդ տողով պահանջվել է որակի պատասխանատու-թեստավորող:

բ) «Բիոնկոդ» ՍՊԸ-ի կողմից դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը և հայտի ապահովումը ներկայացվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, սակայն ներկայացված հայտում «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների մասով ներկայացված փաստաթղթերում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ.

«Մասնագիտական փորձառություն՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր և այլ փաստաթղթեր (Հրավերի առաջին մասի 2.4.1 կետ).

- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) հետ կնքված թիվ UNDP-ARM-00492 գնման պայմանագրում կցված են այլ պայմանագրի ընդունման ակտեր, իսկ UNDP-ARM-00588 պայմանագրում կցված են այլ պայմանագրի ընդունման ակտեր և հաշիվ-ապրանքագրեր, ինչպես նաև կցված UNDP պայմանագրերի ընդունման ակտերը ստորագրված և կնքված են միայն «Բիոնկոդ» ՍՊԸ-ի կողմից:

«Աշխատանքային ռեսուրսներ» (Հրավերի առաջին մասի 2.4.2 կետ).

- Արտակ Հովակիմյանի իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու մասին հաստատված գրավոր համաձայնության մեջ սխալ է լրացված նույնականացման քարտի համարը:

- Որպես որակի պատասխանատու-թեստավորող առաջադրված Ալիսա Սիրադեղյանի աշխատանքային փորձը չի համապատասխանում Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 4-րդ տողով պահանջված որակավորմանը (3 տարվա աշխատանքային փորձ Որպես որակի պատասխանատու-թեստավորող), ինչպես նաև բացակայում է որակավորումը հավաստող փաստաթղթի լուսապատճենը:

- Որպես ավագ ծրագրավորողներ առաջադրված Տաթևիկ Գրիգորյանի և Մարիամ Պետրոսյանի աշխատանքային փորձը չի համապատասխանում Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 3-րդ տողով պահանջված որակավորմանը (3 տարվա աշխատանքային փորձ Որպես ավագ ծրագրավորող):

- Որպես DevOps ճարտարագետ առաջադրված Խաչատուր Տոնոյանի աշխատանքային փորձը չի համապատասխանում Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 5-րդ տողով պահանջված որակավորմանը (3 տարվա աշխատանքային փորձ Որպես Devops ճարտարագետ), բացակայում է նաև իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու մասին հաստատված գրավոր համաձայնությունը:

- Որպես UI/UX դիզայներ առաջադրված Մարիամ Թովմասյանի աշխատանքային փորձը չի համապատասխանում Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 6-րդ տողով պահանջված որակավորմանը (3 տարվա աշխատանքային փորձ Որպես UI/UX դիզայներ), ինչպես նաև բացակայում է որակավորումը

հավաստող փաստաթղթի լուսապատճենը, գործատուի կողմից տրված տեղեկանքը, որ իրականացրել է UI/UX դիզայների աշխատանք:

- Որպես UI/UX դիզայներ առաջադրված Լարիսա Գալոյանի աշխատանքային փորձը չի համապատասխանում Հրավերի առաջին մասի 2.4.2 կետի ա) պարբերությունում ներկայացված աղյուսակի 6-րդ տողով պահանջված որակավորմանը (3 տարվա աշխատանքային փորձ Որպես UI/UX դիզայներ): Տեղեկանքում նշված է, որ աշխատում է որպես Վեբ Դիզայներ UI/UX դիզայների փոխարեն:

- Անհրաժեշտ է Հրավերի Հավելված 1.1-ում շտկել անհամապատասխանությունները ըստ ներկայացվող փաստաթղթերի՝ ներկայացնելով Հրավերի շտկված Հավելված 1.1-ը:

7. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

*ՀՀ դրամ*

| Չափաբաժնի համար | Գնման առարկայի անվանումը | Չափման միավոր | Քանակ | Գնման առարկայի գնման հայտով հաստատված գնման ընդհանուր գինը | Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը * | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ | | «Բիոնկոդ» ՍՊԸ | |
| | | | | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման (առցանց e-reporting համակարգի սպասարկում) ծառայություններ | դրամ | 1 | 45833334 | 37500000 | 45000000 | 31550000 | - |

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

8. Հանձնաժողովը որոշեց հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը. «Հելիքս Կոնսալտինգ» և «Բիոնկոդ» ՍՊԸ-ներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

9. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2026 թվականի փետրվարի 16-ին, ժամը 09:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 615 աշխատասենյակում:

**<< ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

16 փետրվարի 2026թ.
Ժամը՝ 09:30

10. Հանձնաժողովի նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ Կ. Եսայանը:

11.Հանձնաժողովն արձանագրեց, որ «Հելիքս Կոնսալտինգ» և «Բիոնկոդ» ՍՊԸ-ների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթերը:

12. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2026 թվականի փետրվարի 18-ին, ժամը 09:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 615 աշխատասենյակում:

**<< ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

18 փետրվարի 2026թ.
Ժամը՝ 09:30

13. Հանձնաժողովի նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ Կ. Եսայանը:

14. Հանձնաժողովն արձանագրեց, որ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ», իսկ «Բիոնկոդ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման

համար ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Ուստի, հանձնաժողովը որոշեց «Հելիքս Կոնսալտինգ» և «Բիոնկոդ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

15. Ներկայացված հայտերի հիման վրա «**ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1**» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց ճանաչել ընտրված մասնակից «Բիոնկոդ» ՍՊԸ -ին, իսկ այդպիսին չճանաչված մասնակից՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ին:

16. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

17. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/ԳՊ/ԳԱՊ/՝ _____ Ա. Առուշանյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ _____ Ն. Դավթյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Թ. Ավետիսյան

Քարտուղար՝ /ԳՊ/Մհմ/ _____ Լ. Ադամյան